ՆԱԶԱՐ.– (Երգում է) Ամա՛ն, ամա՛ն այ ջաաաա՛ն: (Իջնում է կտուրից Ուստիանի հետ:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս է գալիս եւ կանգնում ժպտադէմ:)

ՆԱԶԱՐ.– (Նրան) Հը՞, ներս ու դո՛ւրս արա, ներս ու դո՛ւրս արա մկան պէս: Ի՞նչ կա էլի: Հը՞: Դո՛ւրս, հառամզադա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Անշարժ կանգնած է):

ՆԱԶԱՐ.– Չե՞ս իմանում, քեաֆթա՛ռ.

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Կենաց աղբիւր: Նախկին պատերազմի երեք պարտուած թագաւորի թագուհիները եկել են եւ լուսապայծառ տեսութեանդ են հայցում:

ՆԱԶԱՐ.– Երեք թագուհի՞… ի՞նչ են ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Նազիրը գիտէ, թագաւոր կենաց:

ՆԱԶԱՐ.– Կանչի գա Նազիրին: (Սենեկապետը գնում է:)

ՈՒՍՏԻԱՆ.– Բան չունե՞ս: Ինչիդ են պէտք՝ թագուհիները: Ճամփի՛, գնա՛ն:

ՆԱԶԱՐ.– (Բազմում է թախտի վրայ) Օխա՛յ… Էո՛ֆ… հը, Ուստիա՛ն, աշխարհքի թագաւոր ենք դառնում: Ո՞նց է քո բանը:

ՆԱԶԻՐ.– (Ներս մտնելով եւ մօտենալով Նազարին մի քիշ կամաց) Թագաւոր սուրբ: Մեր թշնամի թագաւորների թագուհիները տեսնելով, որ իրենց ամուսինները սպանուեցին պատերազմում, լսելով ձեր խելքի եւ քաջութեան համբաւը, սիրահարուել են ձեզ եւ եկել են ընկնելու ձեր ոտքերը եւ սէր հայցելու:

ՆԱԶԱՐ.– Սիրո՞ւն կտորներ են:

ՆԱԶԻՐ.– Լուսնեակի տասնըհինգը:

ՆԱԶԱՐ.– Կերթաս իմ կողմից խանումներին կասես, որ իրենց վրայ սէր եմ կապել, թող ներս հրամմեն: (Նազիրը գնում է:)

ՈՒՍՏԻԱՆ.– Բան եմ ասում, Չի՞ լինի, որ չկանչես:

ՆԱԶԱՐ.– Տէ, ո՞նց կարող եմ: Թագաւորի արք է, ազնի՛ւ թագուհի են:

ՈՒՍՏԻԱՆ.– Ազնիւ թագուհիս որն է, ջանըմ, թագուհին թագուհի չի՞:

ՆԱԶԱՐ.– (Հանգիստ) Չէ՛, կայ խամ թագուհի, կա ազնիւ թագուհի: Ազնիւ թագուհին աշխարհքի թագուհին է:

ՈՒՍՏԻԱՆ.– Էհ բան չունե՞ս, Բան եմ ասում: Ճամփի, գնա՛ն:

ՆԱԶԱՐ.– Չէ թագաւորի պարտք է: Ջանս էլ որ դուրս գա պիտի կատարեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Լա՛ւ պարտք է: Էդ ի՞նչ պարտք է՝ մի իմանանք:

ՆԱԶԱՐ.– Բնութեանս հակառակ է, որ չհասկացած գործերիդ խառնւում ես:

ՈՒՍՏԻԱՆ.– Ինչի՞ չեմ հասկանում: Լաւ էլ հասկանում եմ: